

մը պիտի լափլիզուի անմիջապէս բոցեղէն լեզուներով: Հրդեհը յառաջ եկած է բարոյական անհոգ եւ անհոգի վիճակէ մը, ուր ինքզինքը կորսնցուցած մարդիկ՝ մեծութիւն մը կը զգան ստորին արարքներէ. կոյր ետը պաշտելու համար իր ոսկի պատուանդանին վրայ, ամէնէն աններելի բաներ ներելի եղած են այն վիճակի մէջ: Շէնքը պիտի հրկիզուի, պիտի լմննայ. բոցերը պատած պաշարած են զանի. կան մարդիկ որ կը զգան, կը տեսնեն սոսկալի վտանգը, կ'ըզման բան մ'ընել, բայց սիրտ չունին: Հերիք է պատուել հրանուտ պարիսպը եւ այն գեղեցիկ շէնքին շէմքը ոտք դնել՝ հրդեհը խղզելու համար:

Այն շուարումներուն մէջ ամէն մարդու աչքը սեւեռուած է երեսունեօթը տարեկան երիտասարդի մը վրայ: Կարծես մագնիսացած էին խորհրդաւոր թելադրութիւններով: — Այն երիտասարդը արեւելքէն կու գար. սարեր ու ձորեր կտրած էր, գետեր ու կապաններ անցած էր եւ շուրջաշուրջն ճամբորդութեամբ մը եկած ինկած էր Վոսփորի ափերուն վրայ: Հասարակ ճամբորդ մը չէր ան, ոչ ալ առանց նպատակի ձեռնարկած էր այդ ահագին ճամբորդութեան: Վտարանդի իր սնած ու սիրած սրբավայրէն, Ամրտոլէն, եկած էր իննականց վանքը. հոն ամենասարսափելի երկրաշարժի մը աւերումներուն հանդիսատես՝ պարտքերու եւ պարտականութիւններու բեռներուն տակ՝ հասած էր Պոլիս, ուր Հայ. Եկեղեցւոյն սպառնացող այն հրդեհը իր ամէնէն զօրաւոր, ամէնէն ահարկու վիճակին մէջ կը ճարակէր՝ իր ճարն ու ճարակը գտնելով բարոյական անկումներու հոտած ճարպի պէս ոտքերու թնթուած ծապաղիքէն:

Իրական երկրաշարժէն, բարոյական հրդեհի մը հանդիպել, դիւրին վիճակ մը չէր այն երիտասարդին համար, որ յոյզերով ու յոյսերով եկած էր Ս. Կարապետի անունով: